



ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐ, ՈՐՈՆՔ ԲՈՒԺՈՒՄ ԵՎ ԿԱՆԽՈՒՄ ԵՆ COVID-19-Ը



Դեղամիջոցներ՝ COVID-19-ը Բուժելու համար

Եթե դուք վարակված եք COVID-19-ով, ունեք ախտանիշներ և գտնվում եք ծանր հիվանդանալու ավելի բարձր վտանգի խմբում, կարող եք ստանալ դեղամիջոցներ, որոնք բուժում են COVID-19-ը և որոնք կօգնեն ձեզ չհայտնվել հիվանդանոցում: Անմիջապես թեստավորվեք, եթե գտնվում եք բարձր վտանգավորության խմբում և ունեք ախտանիշներ, և կարող եք ստանալ դեղամիջոցներ: Եթե ձեր թեստի արդյունքը դրական է, անմիջապես դիմեք բուժօգնության:

Մի՛ հապաղեք: Դեղերը լավագույնս գործում են, երբ դրանք տրվում են հնարավորինս շուտ:

Ովքե՞ր կարող են իրավասու լինել բուժման համար

Ախտանիշներ ունեցող և COVID-19-ի թեստի դրական արդյունք ունեցող անձինք, որոնք՝

Լրացուցիչ մանրամասների համար սկանավորեք այց կողմում գտնվող QR ծածկագիրը:



- 65 տարեկան են կամ ավելի բարձր տարիքի -ԿԱՄ-

Ցանկացած տարիքի անձինք՝ բուժաշխատողի խորհրդով.

Օրինակ՝ կարող են իրավասու լինել հետևյալ առողջական խնդիրներ ունեցող անձինք*

- Քաղցկեղ
- Երիկամների, լյարդի կամ թոքերի քրոնիկ հիվանդություն, ներառյալ ցիստիկ ֆիբրոզ կամ տուբերկուլյոզ
- Դեմենցիա (թուլամտություն) կամ այլ նյարդաբանական խանգարումներ
- Շաքարախտ (1-ին կամ 2-րդ տիպ)
- Հաշմանդամություն
- Սրտի հիվանդություններ, կաթված/ ուղեղանոթային հիվանդություն
- Հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ
- Ավելորդ քաշ և գիրություն, ֆիզիկական ակտիվության բացակայություն
- Հղիություն
- Մանգաղաձև բջջային անեմիա կամ թալասեմիա
- Ծխելը՝ ներկայումս կամ նախկինում
- Թմրանյութերի չարաշահման արդյունքում առաջացած խանգարումներ
- Թուլացած իմունային համակարգ, ներառյալ՝ ՄԻԱՎ վարակ ունեցող, օրգանների կամ ոսկրածուծի փոխպատվաստում կատարած

*Այս ցանկը չի ներառում բոլոր հնարավոր առողջական խնդիրները: Մանրամասների համար այցելեք CDC-ի [Որոշակի Առողջական խնդիրներ Ունեցող Անձինք](#) կայքէջ: Խոսեք բուժաշխատողի հետ, եթե կարծում եք, որ վտանգը ձեզ համար մեծ է:

Ինչպե՞ս ստանալ դեղորայք

Կան COVID-19-ը բուժող դեղորայք ստանալու մի քանի տարբեր եղանակներ՝



- **Ձեր բժիշկը կարող է ձեզ դեղատոմս տալ**, որով դուք կարող եք օգտվել Լոս Անջելեսի Շրջանի ավելի քան 300 դեղատներից: Եթե ձեզ անհրաժեշտ է ներերակային բուժում, ձեր բժիշկը կարող է ուղղորդել ձեզ համապատասխան վայր:
- **Դուք կարող եք օգտվել [Թեստավորվեք և Բուժվեք \(Test to Treat\)](#) ծրագրից**, որը հասանելի է շատ դեղատներում և կլինիկաներում:



ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐ, ՈՐՈՆՔ ԲՈՒԺՈՒՄ ԵՎ ԿԱՆԽՈՒՄ ԵՆ COVID-19-Ը

- **Դուք կարող եք օգտվել Հանրային Առողջության Վարչության Հեռաառողջապահական Ծառայությունից** (հասանելի է շաբաթը յոթ օր՝ առավոտյան 8:00-ից երեկոյան 8:30-ը՝ 833-540-0473 հեռախոսահամարով):

Թեստավորվեք և Բուժվեք ծրագիրը և Հեռաառողջապահության Ծառայությունները ապահովում են հեշտ հասանելիություն COVID-19-ի թեստավորմանը, առողջական վիճակի գնահատմանը, և ձեր իրավասու լինելու դեպքում բերանով ընդունվող դեղամիջոցներով COVID-19-ի բուժմանը:

Դեղամիջոցների Տեսակները

Կան 2 տեսակի դեղամիջոցներ, որոնք կանխարգելում կամ բուժում են COVID-19-ը.

- **Հակավիրուսային դեղամիջոցներ**, որոնք կանխում են մարմնում վիրուսի <<բազմացումը>>
- **Մոնոկլոնալ հակամարմիններ**, որոնք կապվում են վիրուսի հետ և օգնում են մարմնին ազատվել դրանից

Այս դեղամիջոցները նախատեսված են խմելու համար (բերանով ընդունվող), և դրանցով բուժումը պետք է սկսել ախտանիշների առաջանալուց հետո **5 օրվա ընթացքում**:



- **Paxlovid** (հակավիրուսային դեղամիջոց)՝ 12 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց համար, որոնք կշռում են առնվազն 88 ֆունտ (pound)
- **Molnupiravir** (հակավիրուսային դեղամիջոց)՝ 18 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց համար: Խորհուրդ չի տրվում օգտագործել հղիության ընթացքում:

Հետևյալ դեղամիջոցները տրվում են *ներերակային (երակի մեջ)* ներարկման տարբերակով, և դրանցով բուժումը պետք է սկսել ախտանիշների առաջանալուց հետո **7 օրվա ընթացքում**:



- **Remdesivir** (հակավիրուսային դեղամիջոց)՝ չափահասների և երեխաների համար, ներառյալ՝ Լորաժիների, որոնք կշռում են առնվազն 3 կգ (7 ֆունտ): Տրվում է 3 օր՝ օրական մեկ անգամ:
- **Bebtelovimab** (մոնոկլոնալ հակամարմին)՝ 12 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց համար, որոնք կշռում են առնվազն 88 ֆունտ (pound): Տրվում է մեկ դեղաչափով:

Դեղամիջոցներ, Որոնք Կանխում են COVID-19-ը

Եթե դուք չեք կարող պատվաստվել COVID-19-ի դեմ առողջական խնդիրների պատճառով կամ ձեր իմունային համակարգը բավարար ուժեղ չէ պատվաստանյութին արձագանքելու համար, խոսեք ձեր բժշկի հետ: Դուք հնարավոր է, որ իրավասու լինեք ստանալ երկարատև ազդեցություն ունեցող մոնոկլոնալ հակամարմինների դեղամիջոց, որը կոչվում է **Evusheld**: Evusheld-ն օգտագործվում է COVID-19-ը կանխելու համար: (Սա հայտնի է որպես նախավարակային պրոֆիլակտիկա): Այն կարող է տրվել 12 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց, որոնք կշռում են առնվազն 88 ֆունտ: Այն տրվում է մեկ այցի շրջանակում մկանային 2 ներարկումների տարբերակով:



ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐ, ՈՐՈՆՔ ԲՈՒԺՈՒՄ ԵՎ ԿԱՆԽՈՒՄ ԵՆ COVID-19-Ը

- **Դեղամիջոցներն անվճար են**



COVID-19-ի այս դեղամիջոցներն *անվճար են*, սակայն հաստատությունը կարող է գանձել այցելության/խորհրդատվության վճար: Medicare-ը և Medicaid-ը փակում են *բոլոր* ծախսերը, իսկ Հանրային Առողջության Վարչության Հեռաառողջապատության ծառայությունը լիովին անվճար է: Եթե դուք ունեք մասնավոր ապահովագրություն, ստուգեք ձեր ապահովագրական ծրագիրը՝ տեսնելու, թե արդյոք այն ծածկում է բոլոր ծախսերը: Եթե ապահովագրություն չունեք, ճշտեք բուժհաստատությունից՝ արդյոք կան վճարներ:

- **Ընդունեք այնպիսի դեղամիջոցներ, որոնք նշանակել է բուժաշխատողը**

Մարդիկ լրջորեն վնասել են իրենց և նույնիսկ մահացել են COVID-19-ի դեմ չթույլատրված դեղամիջոցներ ընդունելուց հետո: Դա ներառում է այլ օգտագործման համար հաստատված և/կամ նշանակված դեղամիջոցները:

- **COVID-19-ը բուժող դեղամիջոցները չեն փոխարինում COVID-19-ի դեմ պատվաստանյութերին**

Պատվաստանյութերն անվտանգ են, արդյունավետ, անվճար և [լայնորեն հասանելի](#) Լոս Անջելեսի Շրջանի ողջ տարածքում: Դրանք ձեզ և մյուսներին պաշտպանում են COVID-19-ով հիվանդանալուց:

Եթե ունեք հարցեր COVID-19-ի դեմ որևէ դեղամիջոցի վերաբերյալ, դիմեք ձեր բժշկին:

Լրացուցիչ տեղեկությունների և բուժում, թեստավորում կամ պատվաստում առաջարկող վայր գտնելու համար այցելեք ph.lacounty.gov/covidmedicines կայքէջ կամ զանգահարեք Հանրային Առողջության Չանգերի Կենտրոն (գործում է շաբաթը 7 օր՝ առավոտյան 8:00-ից երեկոյան 8:30-ը՝ 833-540-0473 հեռախոսահամարով):

COVID-19-ի թեստավորման վերաբերյալ տեղեկությունների համար այցելեք՝ ph.lacounty.gov/covidtests/how.